ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում (1918-1923 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020, 191 էջ:



ՀՀ ԳԱԱ Հայ հասարակական–քաղաքական մտքի և մամուլի պատմության բաժնում կատարված կարևորագույն ուսումնասիրություններից է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Մարիամ Հովսեփյանի «Հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում (1918-1923 թթ.)» աշխատությունը: Այն տպագրվել է Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Գրքի խմբագիրն է ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Խառատյանը:

Կ. Պոլսում հրապարակված «Ճակատամարտ» օրաթերթը գաղափարական շարունակությունն էր նույն քաղաքում 1909-1915 թթ. լույս տեսած ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնական օրգան «Ազատամարտի»: Աշխատության հեղինակը առաջաբանում նշում է, որ «Ճակատամարտ» պարբերականի փորձառու աշխատակազմի շնորհիվ նրա հրապարակումներն ամենօրյա պարբերականությամբ իրական պատկերացումներ էին տալիս Առաջին աշխարհամարտի ավարտից՝ Մուդրոսի զինադադարից հետո Թուրքիայում ստեղծված իրավիճակի, Հայկական հարցին առնչվող զարգացումների, արևմտահայության բեկորների օրհասական գոյապայքարի, Հայաստանի Առաջին հանրապետության անցուդարձի և այլ երկրների հետ ունեցած փոխհարաբերությունների, աշխարհաքաղաքական ընթացիկ փոփոխությունների վերաբերյալ:

Հայ բազմահազար տարագիրների և որբերի ծանր կացությունն ու զանազան հիմնախնդիրները լուսաբանվում էին «Ճակատամարտ» պարբերականի մի քանի խորագրերի ներքո («Վերապրողները», «Գավառի ձայներ»,

«Հայկական կյանք», «Մեր խոսքը»): Ըստ թերթի դիտարկումների, որոնք հմտորեն վերլուծել է հեղինակը, պատերազմի ավարտից հետո 1918-1919 թվականները, ըստ էության, նմանվում էին 1908 թ. հուլիսին Թուրքիայում կատարված հեղաշրջմանը հաջորդած ժամանակահատվածին: Այդ առումով տեղին է մեջբերված Կ. Պոլսի «Ազատամարտի» և նրա իրավահաջորդ «Ճակատամարտի» պատասխանատու խմբագիր, արևմտահայ հայտի գրող և հրապարակախոս Հակոբ Սիրունու խոսքը. «Գինովութեան նոր շրջան բացուէր էր: Ճիշտ՝ ինչպէս որ եղեր էր 1908 թ. յուլիսին: Հիմա ալ ազատութիւնը եկեր էր, բայց ի՞նչ սպանդէ մը յետոյ» (էջ 6):

Այո՛, ազատությունը նորից հայտնվել էր օսմանյան Թուրքիայի երկնակամարում, սակայն հայ ժողովրդի, հայ ազգաբնակչության մեծագույն մասի ողջակիզումից հետո: Եվ այդ չակերտավոր ազատությունը երևութական էր, քանզի պարտադրվել էր դաշնակիցների կողմից (Անգլիա, Ֆրանսիա), և շուտով, շատ շուտով այն իսպառ վերանալու էր:

Ուսումնասիրության հեղինակը փաստարկում է, որ սույն պարբերականը 1918-1922 թթ. գրեթե բոլոր համարներում ամենայն հետևողականությամբ անդրադարձել է Թուրքիայում հայ գաղթականների ունեզրկման և հայ որբերի ուծացման խնդիրներին:

Գաղթականների ծանր, անելանելի կացությանն ու հենց «հայ գաղթական» հասկացությանը թերթի տված սույն ընդհանրական բնորոշումն է այս ձևակերպումը. «Գաղթակա՛ն... Անունն է այս այն անհարմար բազմութիւններուն, որոնք աշխարհէ աշխարհ, քաղաքէ քաղաք ման կուգան կապոցներով, որպէս զի շնչելու տեղ մը գտնեն: Անունն է այն բիւրահազար դժբախտներուն, որոնք իրենց հայրենիքին մեջ անգամ չունեցան անկիւն մը կամ ողջ մնալու ապահովութիւն և ափ կառնեն ուր որ կրնան: Գաղթական է, մեկ խօսքով, մայր-երկրի բնակչութիւնը կէս առ կէս, եթէ ոչ աւելի» (էջ 7):

Մ. Հովսեփյանը օրաթերթի համարներում առկա բազմառատ նյութերի համադրությամբ հստակ և համոզիչ կերպով է ներկայացնում այն տեսակետը, որ Մուդրոսի զինադադարից հետո, արդեն խաղաղ ժամանակ թուրքական իշխանությունները իրենց հայրենի օջախները վերադարձող արևմտահայության բեկորների հանդեպ կիրառեցին նույն դաժան ու նողկալի քաղաքականությունը, ինչը որ կիրառել էին հայ ժողովրդին դեպի արաբական անապատներ աքսորելիս:

Տարագիր հայերի վերադարձի ճանապարհին թուրք պաշտոնյաները հարուցում էին հնարավոր բոլոր արգելքներն ու խոչընդոտները: Բազմաթիվ փաստեր են բերվում, թե ինչպես հայերին օրերով և շաբաթներով պահում էին տարբեր կայարաններում, բաց երկնքի, անձրևի և ձյան տակ: Նպատակը պարզ

էր: Գաղթականները ուժասպառ էին լինում, հիվանդանում և մահանում ցրտից ու սառնամանիքից կամ սովամահ լինում տունդարձի ճանապարհներին:

Թերթում զետեղված նյութերը վկայում են, որ արևմտահայերն ու նրանց քաղաքական պատասխանատուները սխալվել էին՝ կարծելով, թե զինադադարից հետո իրենց համար ստեղծվելու էր բնականոն ու տանելի իրավիճակ:

Թուրքական իշխանությունների դաժանությունը ընդունում էր անգամ զավեշտալի բնույթ: Այսպես, 1919 թ. օգոստոսին «Ճակատամարտը» տեղեկացնում էր կառավարության այն որոշման մասին, որով գավառային իշխանություններին հրահանգ էր տրվել տասանորդի տուրք գանձել բոլոր հայկական բնակավայրերից, որոնցում դեռևս նոր-նոր էին պատսպարվել գաղթից վերադարձած հայ տարագիրները: Այս առումով անչափ բնութագրական է թերթի դիտարկումը. «Այս պատկերին առջև մարդ կը մնայ ապշած. մի՞թէ աշխարհի վրայ կը գտնուի կառավարութիւն մը, որ ըլլայ այնքան անողորմ, որ մտքէն անցնէ տասանորդի տուրք գանձել այնպիսի ժողովուրդէ մը, որ վերջին 5-6 տարիներու ընթացքին յայտարարուած էր օրենքէ դուրս, անոր մեծ մասը մարդ գազաններու և վայրենի գազաններու կեր դարձած է, թափառած է պետութեան զանազան մասերը, առանց գործի, առանց բնակարանի, կորսնցուցած ամեն բան, մերկ վերադարձած է իր աւերուած օջախը» (էջ 19-20):

Աշխատության էջերում լուսաբանվել են բազմազան ու բազմաբնույթ խնդիրներ: Դրանք վերաբերում են հայ գաղթականների վերադարձի և նրանց կողմից լքված գույքերին առնչվող խնդիրներին, բռնի իսլամացված հայ որբերի և հայուհիների ճակատագրին, որբերի ստացած կրթության որակին ու մակարդակին, գաղթականների և որբերի խնամատարության համար Հայաստանի Առաջին հանրապետության կիրառած ջանքերի լուսաբանմանը, հանուն որբերի գոյատևման հայրենիքի տուրքի ներդրման գաղափարին և այլն:

Խորապես ուսումնասիրելով Կ. Պոլսում հրապարակվող պարբերականի 1918-1923 թթ. համարները (ի դեպ, դա ահռելի աշխատանք է)՝ հեղինակը վերջաբանի փոխարեն հրապարակում է իր ուսումնասիրության արդյունքները, որոնցից առավել կարևոր են.

1. «Ճակատամարտը», ուշադրության կենտրոնում պահելով գաղթականների և որբերի հիմնախնդիրները, ոչ միայն պարզապես նկարագրել է վերջիններիս կացությունը, ոչ միայն ներկայացրել է նրանց կենսապայմանների և ապրելակերպի պարզ նկարագրությունը, այլև վերհանել է այս խավին պատկանող մարդկանց առջև ծառացած բազում խնդիրներն ու դրանք ծնող պատճառները:

2. Պարբերականը բացահայտ կերպով խոսել է թուրքական իշխանությունների կողմից հայ գաղթականների և որբերի նկատմամբ ուղղորդված, վերջիններիս ֆիզիկական ոչնչացմանը միտված հայասպան քաղաքականության մասին:

3. «Ճակատամարտը» պատմության դատաստանի առջև կոնկրետ փաստերով և օրինակներով վկայել է ցեղասպանությունից մազապուրծ եղած հայ գաղթականների ունեզրկման, նրանց, ինչպես նաև հազարավոր որբերի բռնի կրոնափոխման՝ թուրքացման մասին:

4. Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից հետո այդ երկրում առավել հակահայկական ու հայաջինջ պետական քաղաքականության ընդունումից հետո օրաթերթը դադարել է սեփական հրապարակումներով հանդես գալ մասնավորապես հիշյալ կարևոր հիմնահարցերի վերաբերյալ՝ բավարարվելով լոկ Խորհրդային Հայաստանի պարբերականներից արտատպումներով:

5. Սեփական հրապարակումների միջոցով լրագիրը ճշմարտացի պատկերացում է տվել ոչ միայն Թուրքիայում հայ գաղթականների և որբերի հանդեպ եղած վերաբերմունքի և տարվող պետական քաղաքականության, այլև Հայաստանի Առաջին հանրապետությունում և հետագայում կազմավորված Խորհրդային Հայաստանում մշակված և իրագործված քաղաքական ու տնտեսական ծրագրերի մասին:

6. Պարբերականի տեսադաշտից չեն վրիպել նաև հայկական զանազան գաղթօջախների կողմից հանուն եղեռնապուրծ հայ գաղթականների և որբերի արված ձեռնարկները, որոնք բնավ չեն խանգարել «Ճակատամարտի» խմբագրակազմին մատնանշել և քննադատել նկատվող բացերն ու թերությունները, կատարել անհրաժեշտ առաջարկություններ:

Որպես այս ամենի ամփոփում՝ նշենք, որ Մարիամ Հովսեփյանի կատարած բարձրարժեք աշխատանքն աչքի է ընկնում շարադրման գեղեցիկ ու հստակ ոճով: Կ. Պոլսում XX դարասկզբին լույս տեսած «Ճակատամարտի» հավաքածուն հայ պատմաբան Մ. Հովսեփյանի համար ծառայել է որպես կարևոր ու լիարժեք սկզբնաղբյուր հայ գաղթականների ու որբերի հիմնախնդիրները քննական վերլուծության և արժևորման ենթարկելու համար:

Այո՛, դա անվերապահորեն այդպես է, քանզի «Ճակատամարտի» էջերում հրապարակվել են Հայ դատին ու մասնավորապես հայ գաղթականների ու որբերի հիմնախնդիրներին առնչվող բազմաթիվ փաստաթղթեր, որոնք ունեն սկզբնաղբյուրային վավերականություն ու նշանակություն:

Վաստակաշատ պատմաբանի սույն աշխատությունը նախատեսված է պատմաբանների, հասարակագետների ու քաղաքագետների, հայ մամուլի և հասարակական մտքի արգասիքներով հետաքրքրվողների համար:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու